<< ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Խ. Աբովյանի քննադատական հայացքների վերլուծություն

ԱՌԱՐԿԱ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Աննա Մաթոսյան

ՄԱՐԶ Լոռի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Կաճաճկուտի հիմնական դպրոց

ՂԵԿԱՎԱՐ Գագիկ Էմինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԳՐԱՔՆՆԱԴԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ.....5
Խ. ԱԲՈՎՅԱՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ.....8
<< ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ>> ՎԵՊԸ.....11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ, գրող Խաչատուր Աբովյանի ապրած դարաշրջանը հատկանշվում էր պարսկական և թուրքական բռնապետական լծի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարով: Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու իրականացմամբ և լուսավորական շարժմամբ, որի նպատակն էր փրկել հայրենիքը հոգևոր ստրկությունից և մտավոր խավարից:Աբովյանը այդ շարժման գաղափարական առաջնորդն էր: Նա հայ և ռուս ժողովուրդների եղբայրական բարեկամության, հայերի ռուսական կողմնորոշման ջատագովն էր ու դրոշակակիրը:

Խաչատուր Աբովյանը հայ նոր գրականության հիմնադիրն է: Նա փոխեց հայ գրականության ընթացքը, բերեց նոր լեզու՝ աշխարհաբարը, նոր հերոս՝ ժամանակակից մարդը, նոր պատմական ժամանակաշրջան՝ արդիականությունը: Նա ամեն ինչ արեց, որ ժողովուրդն իրեն հետաքրքրող գիրք ունենա, և այդ գիրքն արտացոլի նրա կյանքը:

Աբովյանը թողել է գրական մեծ ժառանգություն: Քսանական թվականներին նա գրել է սիրո և կարոտի տաղեր, որոնք միջնադարյան բանաստեղծների ու գուսանների ստեղծագործությունների յուրատեսակ համադրություն է:

Դորպատյան տարիներին մտածել է աշխարհաբարը գրական լեզու դարձնելու մասին, որպեսզի գեղարվեստական գրականությունը համապատասխանի նոր ժամանակների պահանջին և հանրամատչելի լինի: Նրան միշտ հուզել է անհատի և հայրենիքի ճակատագրերի խնդիրը, երազվածի և աններդաշնակ իրականության հակադրությունները:

Աբովյանը շատ մեծ կարևորություն է տվել ուսմանը: Ըստ նրա՝ ուսուցումը պետք է համապատասխանի մանկան հոգեկան կարողություններինև ժամանակի պահանջներին, տարվի ոչ թէ արդեն մեռած լեզվով՝ գրաբարով, այլ կենդանի խոսքով ու զննական միջոցներով:

Աբովյանի ստեղծագործություններից բոլոր ժամանակներում ոգեշնչվել են հայ արվեստագետները ու ստեղծագործողները: Նրա մասին շատերն են խոսել և

գնահատել Աբովյանի հանճարը, իսկ Վահրամ Փափազյանը այսպես է բնութագրել Աբովյանին << Աբովյանը հայ ժողովրդի զանգվածային բողոքն ու ընդվզումն է>>:

Աշխատանքի առարկան է << Խաչատուր Աբովյանը հայ նոր գրականության հիմնադիր>>:

Հետազոտություն նպատակը. Ուսումնասիրել Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունների քննադատական հայացքները:

Խնդիրները.

Բացահայտել Աբովյանի այն ստեղծագործությունները, որոնցում ակնառու են նրա քննադատական հայացքները:

Ուսումնասիրել պատմական այն ժամանակաշրջանը, որին անդրադարձել է Աբովյանը իր ստեղծագործություններում:

Նորովի ներկայացնել նրա « Վերք Հայաստանի» վեպը, անդրադառնալ հերոսի ընտրությանը:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՔՆՆԱԴԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Աբովյանի ապրած ժամանակաշրջանը հատկանշվում է պարսկական ու թուրքական բռնապետական լծի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարով, Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու հույսերի իրականացմամբ և լուսավորական շարժմամբ, որի նպատակն էր փրկել հայրենիքը հոգևոր ստրկությունից և մտավոր խավարից, և Աբովյանը դառնում է այդ շարժման գաղափարական առաջնորդը: Աբովյանը հայ և ռուս ժողովուրդների եղբայրական բարեկամության, հայերի ռուսական կողմնորոշման ջատագովն էր նաև:

Նա շատ էր գնահատում ժողովրդական բանահյուսության դերը գրականության զարգացման գործում: Հավաքում ու մշակում էր առակներ, առածներ, ավանդություններ, երգեր ու սկզբնավորում էր հայ բանագիտությունը: Աբովյանը զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ: Թարգմանել է Հոմերոսի, Գյոթեի, Ֆրիդրիխ Շիլլերի գործերից: Աբովյանը միշտ եղել է այն համոզման ջատագովը, որ լեզուն է ազգապահպանման կարևոր գործոնը, հասարակական դերն ու նշանակությունը: Նա ծանոթ էր նույն շրջանում ձևավորվող պատմահամեմատական լեզվաբանությանը, որի դիրքերից էլ քննել է լեզվի ծագման, զարգացման ու փոփոխության հարցերը, ծավալել աշխարհաբարը ժամանակի պահանջներին համապատասխան մշակելու մեծ աշխատանք:

Աբովյանն զբաղվել է նաև քերականության հարցերով: «Նախաշավիղ»-ի երկրորդ մասում շարադրել է աշխարհաբարի քերականությունը, բաղդատել գրաբարի և աշխարհաբարի լեզվաքերականական իրողությունները, մատնանշել նրանց տարբերությունները: Աբովյանի ստեղծագործությունն արժեքավոր ներդրում է հայ նոր պատմագրության մեջ: Նա քննադատել է ժամանակի եվրոպական պատմագրությունը, այն որակել աշխարհակալ տերությունների պատմություն, որից վտարված են փոքր ժողովուրդներն ու աշխատավոր խավերը: Նա կարծում էր, որ

պատմական անցյալը պետք է դառնա ազատագրական պայքարի, արդիական հարցեր լուծելու ազդակ:

Աբովյանը ծաղրել է իր ժամանակների հոգևորականության ներկայացուցրչներին, թեև չի հանգել կրոնի և նրա սպասավորների ժխտման: Նրա ըմբռնմամբ աշխարհն արարչագործության ծնունդ է, բնությունը աստվածայինի դրսևորում, զարգացումն ու փոփոխությունները՝ ամենատեսի կամքի արտահայտությունը: Աբովյանն ուսումնասիրել է հայերի ընտանեկան սովորություններն ու կենցաղը («Գյուղական տների կառուցվածքը», « Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի ու հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին») և սկզբնավորել հայ ազգագրությունը: « Քրդեր» և « եզդիներ» ակնարկներով հիմք է դրել քրդագիտությանը Հայաստանում:

Խաչատուր Աբովյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, թեև իր կենդանության օրոք տպագրել է միայն «Նախաշավիղ կրթության» դասագիրքը: Նրա ձեռագրերը երկար ժամանակ անհայտ են մնացել լայն ընթերցարանի համար:

1858 թ լույս է տեսնում նրա « Վերք Հայաստանի» պատմավեպը, իսկ խորհրդային տարիներին Գիտությունների Ազգային Ակադեմիան 1948-1961թթ կազմեց Աբովյանի երկերի 10 հատորից բաղկացաց ժողովածուն, որոնք գրեթե հանրագիտարաններ են, քանի որ իրենց մեջ պարունակում են բազմաթիվ հոդվածներ, նամակներ . . .

Աբովյանի առաջին բանաստեղծությունները որոնք գրված են գրաբարով, արտացոլում են նրա ռոմանտիկ աշխարհընկալումը: Բայց պարսկական բռնապետության մղձավանջն ապրած բանաստեղծը երազում էր հայրենիքի անցած փառքն ու պետականությունը վերականգնելու մասին: Արդեն 20ական թթ վերջերին Աբովյանը գրել է սիրո և կարոտի տաղեր, որոնք ուշ միջնադարի հայ տաղերգուների (Բաղդասար Դպիր, Սիմեոն Երևանցի, Ահարոն Վարդապետ) և ժողովրդական գուսանների ստեղծագործական փորձի յուրատեսակ համադրություն էին: Դորպատյան տարիներին նա սկսեց մտորել գեղարվեստական գրականությունը համապատասխանեցնելու նոր ժամանակի պահանջներին, ժողովրդին հասկանալի աշխարհաբարը դարձնելու գրական լեզու:

Աբովյանը հայ քնարերգությունը լիցքավորել է հասարակական- քաղաքական բարձր գաղափարներով, խոհականությամբ և դրամատիզմով: Նրան տանջել են անհատի և հայրենիքի ճակատագրերը, երազանքի և աններդաշնակ իրականության հակադրությունները:

«Թուրքի աղջիկը» պատմվածքը դնում է մարդու ազատության հարցը: Մարդը կարող է ազատ լինել միայն Աստծու հետ ներդաշնակության հասնելու դեպքում, քանի որ մարդու ազատության սերմերը Աստծո մեջ են: Պատմվածքում վառ արտահայտվում է ազգերի խտրականության հարցը ինչը հեղինակին մտորումների մեջ է գցում: Նա փորձում է հասկանալ չարիքի արմատը: Թուրքի աղջիկը պայմանական սիմվոլ է, չէ որ Աստծո աշխարհում ամեն ինչ միասնության մեջ է և չկան սահմաններ: Որպես ռոմանտիկական գրող Աբովյանը հավատում է, որ միակ փրկությունը վերադարձն է դեպի բնություն և Աստծո հավատ:

Այս ամենից հետո հասկանալի է դառնում Աբովյանի ստեղծագործությունների զարգացման ուղին, հասկանալի՝ նրա պոեզիայի էությունն ու պատմական դերը: Առավել արժեվորվում ու կշիռ է ստանում նրա պոեզիան, որի գեղարվեստական զարգացման պատմության մեջ, անշուշտ, առանձին էտապ է հանդիսանում դորպատյան շրջանը:

Դորպատյան շրջանի Աբովյանի պոեզիան ընթացավ համաշխարհային պոեզիայի գրական մի քանի արտահայտությունների ուղիով՝ ռոմանտիզմի, մարդու և նրա ներքին աշխարհի,՝ իբրև գրականության ու արվեստի հիմնական հարցի, իդեալի և իրականության հակասության խնդրի, մարդու և ճնշված ազգության ազատագրման խնդրի՝ ֆեոդալական կապանքներից ու բռնությունից: [4 ; 112]

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ

Մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի ուսուցիչ, ով մեծ սիրով և զոհաբերությամբ նվիրված լիներ մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Աբովյանն է...

Կար Կոխ, գերմանացի գիտնական

Աբովյանը իր մանկավարջական գործունեությունը սկսել է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հայկական մշակույթի գործունեության և կրթության բնագավառում լրջագույն պայքար էր գնում նոր աշխարհաբար լեզվի և գրաբարյան գործածական լեզվի միջև: Ըստ նրա բարոյական դաստիարակության նպատակն է մարդ քաղաքացու (ազնիվ, հայրենասեր, մարդասեր, աշխատասեր) ձևավորումը, որը իրագործվում է տարբեր միջոցներով՝

1. Անձնական օրինակով
2. Խրատով
3. Խրախուսանքով
4. Պատժի կիրառմամբ, բայց ոչ մարմնական

Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը համարում էր դաս- դասարանային համակարգը: Նա մեծ տեղ էր հատկացնում ուսուցման այնպիսի մեթոդների կիրառմանը, ինչպիսիք էին.

*. Պատմելու

*.Բացատրման

*.Զրույցի

*.Ցուցադրման

*.Էքսկուրսիաների

*. Գործնական աշխատանքի և այլն:

Աբովյանը մեծ կարևորություն էր տալիս ֆիզիկական և աշխատանքային դաստիարակությանը և ոչ միայն տեսական հիմնավորումներով այլև գործնական:

Մեծ արժեք ունեն Աբովյանի մանկավարջական ստեղծագործությունները, մասնավորապես «Նախաշավիղը», որը յուրատեսակ դասագիրք էր տարրական դպրոցի համար, և բավականին երկար ծամանակ գործածության մեջ էր հայ դպրոցում: Այս գիրքը միակ գիրքն էր որ տպագրվել է գրողի կենդանության օրոք: Սակայն ցարական պաշտոնեությունը և հայ հետադիմականները խափանել են գրքի գործածությունը: Իր դաստիարակության վերաբերյալ հայացքները Աբովյանը շարադրել է «Պատմություն Տիգրանի>>» գեղարվեստական վեպում:

Ըստ նրա ուսուցումը պետք է համապատասխանի մանկան հոգեկան կարողություններին և ժամանակի պահանջներին, տարվի ոչ թե սխոլաստիկ օրենքներով ու մեռած լեզվով, այլ՝ կենդանի խոսքով, զննական միջցներով: Նա պարտադիր պայման դարձրեց այն, որ աղջիկները կրթվեն տղաներին հավասար: Աբովյանը սկզբում նպատակադրվել էր Հայաստանում ստեղծել գիտական միաբանություն՝ դպրոցով ու տպարանով, գավառներից հավաքել մանուկների, կրթել ու դաստիարակել նրանց և ապա ուսուցիչ- քահանայի պաշտոնով ուղարկել գյուղերն ու քաղաքները:

1834թ Աբովյանը ծրագրել էր հիմնել երեք կարգի դպրոց՝ քահանայացուների, աղքատ ու որբ երեխաների և ունևոր դասի ու վաճառականների երեխաների համար: Երկրորդ կարգի դպրոցի սաները , հանրակրթական առարկաներին զուգընթաց ուսանելով արհեստներ, գյուղատնտեսություն և վերադառնալով ծննդավայր, նպաստելու էին տեղի տնտեսական կյանքի զարգացմանը: Բոլոր դպրոցների լավագույն շրջանավարտներն ուղարկվելու էին Եվրոպայի և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ավելի ուշ նա համոզվեց, որ հոգևորականությանը պետք է մեկուսացնել երեխաների դաստիարակությունից: Աբովյանի ծրագրած դպրոցներում պետք է հավասարապես սովորեին հարևան ժողովուրդների երեխաները, որպեսզի լուսավորություն տարածերն իրենց ազգերի մեջ ևս: Իր մանկավարժական գործունեությամբ, դասագրքերով, հոդվածներով ու գրություններով նա առաջ է քաշել համընդհանուր գրագիտության խնդիրը, որ իրագործվելու էր ժողովրդական դպրոցների միջոցով:

Աբովյանը առաջարկել է ուսուցումը կապել երեխաների առօրյա աշխատանքային գործունեության հետ, դպրոցներին կից ստեղծել արհեստանոցներ ու փորձադաշտեր, պարբերաբար կազմակերպել բնարշավներ: Երեխաների գեղագիտական դաստիարակությունը, գեղեցիկ արվեստները, հատկապես երաժշտությունն ու նկարչությունը համարել է անհատի հոգևոր վերափոխման կարևոր միջոց՝ պարտադիր բոլորի համար:

Պարրոտի աջակցությամբ Աբովյանը 1830-1835 թվականներին պետական թոշակով ուսանել է Դորպատի համալսարանում, հատուկ ծրագրով նախապատրաստվել ուսուցչական գործունեության: Ուսումնասիրել է բնական և հասարակական գիտություններ, լեզուներ(գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն), եվրոպական գրականություն և փիլիսոփայություն, երաժշտություն, արհեստներ: Սերտ կապեր է հաստատել եվրոպացի և ռուս մտավորականների հետ:

Ս. Բազյանն անդրադառնալով Աբովյանի գործունեությանը, գրում է «Աբովյանի դորպատյան կյանքի ուսումնասիրության ամենավստահելի աղբյուրը, նրա անձնական ու հասարակական հետաքրքրությունները պարզաբանող անխարդախ վավերաթուղթը, նրա գրական գիտական շրջապատի, բարեկամների ու թշնամիների մասին պատմող անաչառ վկան մեծ գրողի ու մտածողի օրագրերնեն՝ ամփոփված 15 մեծ ու փոքր տետրակների մեջ: Սրանցում կանոնավոր հաջորդականությամբ, մերթ էլ տևական ընդմիջումներից հետո, գրի է առել այն բոլոր դեպքերը, դիպվածներն ու խորհրդածությունները, որոնք պատահել են իր հետ կամ զբաղեցրել միտքը և որոնք այս կամ այն առումով կարող էին հետաքրքրություն ներկայացնել հայրենակիցների համար ևս»:

« Օրագրերի միջից ծայր են առնում Աբովյանի ապագա նախագծումները, որոնց իրականացման համար ծրագրողն ևս հաճախ հստակ պատկերացումներ չունի: Արդեն խունացած թերթերը պատմում են նրա նախագծած երկսեռ դպրոցի մասին, որ հիմնելու էր հայրենիքում և ուր պետք է դաստիարակվեին ոչ միայն հայերը, այլև դրացի ազգերի զավակները՝ հետագայում դառնալով հայրենանվեր ուսուցիչներ ու դաստիարակներ և հասարակության բարուն նվիրված մարդիկ»: [2 էջ 394]

Ազատամիտ մտավորականների բարեկամական շրջապատում նա ստացել է այն ամենը, ինչը չէր կարող տալ ժամանակի մեկ այլ համալսարան: Այդտեղի պաշտոնական հավաքույթներում է Աբովյանը լսել արգելված ազատ խոսքը, պատմական ճշմարտություններ, հաղորդակից եղել ժամանակի քաղաքական իրադարձությունների շուրջը ծավալվող բազմաթիվ վեճերի և զրույցների, որոնք աստիճանաբար նպաստել են նրա քաղաքական աշխարհայացքի զարգացմանը: Աբովյանի աշխարհայացքի ձևավորման գործում զգալի դեր է ունեցել նաև ժամանակի առաջավոր երկրների պետական ու ֆինանսական համակարգերին քաջատեղյակ Ֆրիդլենդերը: Նրա շնորհիվ Աբովյանը տեղեկացել է Ֆրանսիայի ու Անգլիայի պետական կառուցվածքի, քաղաքական կուսակցությունների մասին: ինչպես նաև տեղեկացել, որ բացի իր իմացած բռնապետական կարգերից, կան այնպիսի պետություններ, որտեղ հպատակները ոչ միայն իրավունք ունեն մասնակցելու կառավարության ընտրություններին, այլև իրենց իրավունքների պաշտպանության համար զենք բարձրացնել:

Աբովյանի մտավոր զարգացման հարցում մեծ դեր է ունեցել նաև դորպատյան ուսանողությունը:

Հենց Դորպատում է Աբովյանը եկել այն համոզման, որ աշխարհաբարը պետք է դարձնել դպրոցի և գրականության լեզու: Իր պրակտիկ մանկավարժության գործունեության ընթացքում, Աբովյանը երեխաների ուսուցման գործում բախվում է մեծ արգելքների: Երեխաներին բարդ ու անհասկանալի էր գրաբարը: Այս խնդրի լուծման համար էլ նա որոշում է նոր լեզուն՝ աշախարհաբարը դպրոց բերելն է: Եվ նա փայլուն կերպով լուծելով այս խնդիրը, ստեղծում է առաջին աշխարհաբար գիրքը՝ « Նախաշավիղը»:

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԸ

« Վերք Հայաստանի» վեպը Աբովյանը գրել է 1841թ: Այն դասվում է այնպիսի հուշարձանների շարքը, ինչպիսին են Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը» և Նարեկացու « Մատյան ողբերգությանը»:

Վեպի խնդիրները- Վեպը գրելու ժամանակ Աբովյանը իր առջև երեք խնդիր է դրել իրագործելու.

1. Լեզվի հարցը: Ըստ Աբովյանի դա ամեն ինչի սկիզբն է ու առաջնային լուծում պ ահանջող: Գրաբարը ճիշտ է գեղեցիկ լեզու է, բայց դժբախտաբար մեռած ու ա նհասկանալի ժողովրդին: Վեպը գրելով աշխարհաբար, Աբովյանը հեղաշրջում է

   կատարում հայ մշակույթի և գեղարվեստական մտածողության ասպարեզում:
2. Գրականության բովանդակությունը: Իր ուսուցչական աշխատանքի ընթացքո ւմ Աբովյանը նկատել է, որ հայ երեխաները ավելի հաճույքով կարդում են օտար հեղինակների երկերը, որովհետև այնտեղ ներկայացված են երևելի մարդկանց գործերը, և գրեթե անտարբեր են հայերեն գրքերի նկատմամբ: Նա ձգտել է նկա րագրել բոլոր այն գործողությունները, որոնք կազմում են մարդու աշխարհիկ կյ անքի բովանդակությունը:
3. Հերոսի ընտրությունը: Ի հակադրություն կլասիցիզմի գրականության, որ հերոս ներ է ընտրում հնագույն առասպելներից ու պատմական անցյալից, Աբովյանն ընտրում է Աղասուն՝ ծագումով գյուղացի և իրական անձնավորություն:

Վեպի գաղափարը- Այս կամ այն ազգի կենսունակությունը որոշվում է երեք հատկանիշով՝ ֆիզիկական ուժ, հոգևոր կարողություն և բարոյական միասնություն: Ունի՞ արդյոք հայ ժողովուրդը այդ հատկանիշները: Աբովյանը այս հարցին միանգամայն դրական պատասղան է տալիս: Ազգային գոյության առաջնային հիմունքներից է հոգևոր հարստությունը: Այստեղ նույնպես Աբովյանը բացառիկ կառողություններ է վերագրում հայ ժողովրդին: Ամենից ավելի անփոխարինելի արժեքներ են կրոնը և լեզուն: Վեպի էջերում Աբովյանը կապակցում է հայ ժողովրդի ամբողջ կենսագրությունը, հիշատակում երևելի թագավորների և հերոսների անուններ, պատմում բերդերի ու ավերակների հետ կապված ավանդություններ, ցույց տալիս նախնիների մեծագործությունները օտար նվաճողների դեմ մղած պայքարում: Նա կապ է հայտնաբերում անցյալի և ներկայի միջև՝ ապացուցելու համար, որ

ֆիզիկական այդ ջիղը բնավ չի անհետացել, և գործում է Աղասու և իր ընկերների Խլղարաքիլիսայի և Ապարանի քաջազուն հերոսների երակներում:

Վեպում արտահայտված է ևս մի գաղափար: Դա հայերի առաքելությունն է մարդկային առաքելության մեջ: Ֆիզիկական, հոգևոր և բարոյական արժեքները չեն կարող փրկության երաշխիք լինել, եթե չդրվեն գործողության մեջ:

Վեպում հեղինակը կոչ է անում ժողովրդին ապստամբություն բարձրացնեն Օմանյան Թուրքիայի դեմ: Նկարագրում է ռուս ժողովրդի առաջին քայլերը հայկական հողերի վրա, թե ինչպես են նրանք օգնություն ձեռք մեկում անօգնական ժողովրդին:

Կերպարները - հեղինակը որպես վեպի գլխավոր հերոս ընտրեց Աղասուն՝ հասարակ ժողովրդի մի մասնիկին: Եվ հենց Աղասու բերանով խոսեց ժողովրդին այդքան հուզող հարցերի մասին: Նրա կերպարը ուրվագծվում է պատմական իրադարձությունների ընդհանուր համապատկերի վրա: Այս իմաստով, նա լինելով իրական կերպար, միաժամանակ նաև պատմության հերոս է, այսինքն՝ գրողը պատմականացնում է նրա երևույթը որպես գաղափարատիպ և անհատականություն: Այսպես նաև մյուս կերպարները: Նրանք ոչ թե սովորական իմաստով գործող անձիք են, այլ՝ պատմության անհատներ, որոնք պատմական շրջադաջձի կրողներ են՝ արծափեցի Մանուկ աղան իր գերբնական հսկայությամբ ու քաջությամբ, շուլարվեցի Սոսն ու Հոհանջանը, բայազեդցի Բարսեղ, Մանուկ, Մկրտիչ իշխանազուներն ու ղարսեցի աշխարհահռչակ Տիգրանյան տունը՝ազգային բարորությամբ իրենց առաքինությամբ, ապա նաև Ներսես և Գրիգոր եպիսկոպոսները, Մադաթով և Բեհբութով երիտասարդները:

Աղասին անհանգիստ, որոնող, անկաշկանդ բնավորության տեր մարդ էր: Նա աշխարհն ընկալում էր գեղջկական պատկերացումների անմիջականությամբ և բնական կատարելությամբ:

Աղասին ուներ խորհող միտք և բնություն, աշխարհն ու տիեզերքը ճանաչելու, Աստծու առեղծվածը հասկանալու ներքին զգացողություն:

Աղասին հավաքական կերպար էր: Աբովյանը նրա կերպարի մեջ խտացրել է հայ ժողովրդի բարոյական բարձր նկարագիրը՝ նրա անձնական խոհերը, ֆիզիկական ու մտավոր կարողություններն ուղղելով հայրենական սիրո պաշտամունքին:

Անցյալի պատմական ժամանակներն ու դեմքերը մարմնավորված են հերոսների մեջ. « Վարդանա թոռները չե՞նք, Տրդատա արինը չի՞ մեր սրտումը, Տիգրանի շունչը չի՞ մեր բերնում »: [1 ; 171]

« Վերք Հայաստան»-ին սոսկ գեղարվեստական բնույթի գործ չէր Աբովյանի համար. վեպում նա պատկերել է հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական ու բարոյական վերքերը, որոնք դարեր շարունակ սպիացաց էին հայ ժողովրդի սրտին: Այս վեպը նաև ողբ էր Աղասու և նրա նման հերոսների համար, նրանց կատարած կերոսական ներբողը: Այդ պատճառով էլ Աբովյանն իր վեպը անվանել է « Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի»:

«Վերք Հայաստանի» վեպը անկրկնելի երևույթ է հայ գրականության մեջ. այն իր մեջ համադրում է արդիական - պատմական վեպի կարևորագույն տարրերը՝ ամփոփված՝ արևելյան և եվրոպական գրական ուղղությունների բաղադրիչներով և համեմված խոհափիլիսոփայական նրբերանգով: Իր վեպին անդրադառնալով՝ Աբովյանը հետևյալ կերպ է բացատրում նրա բնույթը՝ համարելով այն ժողովրդական վեպ՝ գրված ժողովրդին հասկանալի լեզվով. « Աղասուն ես անպայման ցանկանում էի մշակել իբրև ժողովրդական վեպ,- գրում է Աբովյանը,- որպեսզի դրանով օտարներին ևս ծանոթացնեի ժամանակակից հայ ազգության հետ: Ինձ համար այնքան հիշարժան 1841թ բարեկենդանին սկսեցի իմ պատմությունը այն ձևով, կարծես, մի հայ գյուղացի պատմելիս լիներ իր հարևանին»: Այստեղից էլ ահա պարզ է դառնում Աբովյանի ընտրած վիպական ձևը, պարզ, աշխարհաբար լեզուն, ժողովրդական մտածողությանը հարազատ նկարագրություններն ու խորհրդածությունները:

« Վերք Հայաստանի» վեպը դարձավ այն հզոր ակունքը, որի հետ կապվեցին հայ նոր գրականության շատ արժեքներ: Այն ազդակ հանդիսացավ ինչպես մեր ռոմանտիկ գրողների՝ Պատկանյանի, Ռաֆֆիի, Մուրացան, այնպես էի ռեալիստական ուղղությունների գրողների՝ Պռոշյանի, Աղայանի, Թումանյանի, Իսահակյանի և այլոց համար: « Վերք Հայաստանին» և իր ժանրային նկարագրով ու արտահայտած գաղափարների բնույթով, և զգացմունքների անմիջականությամբ ու դրանց ներգործության մեծ ուժով եզակի ու անկրկնելի երևույթ է, որին վիճակված էր դառնալ հայ ժողովրդի ազգային վեպը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աբովյանի քննադական հայացքների վերլուծություն թեմայի ուսումնասիրության ընթացքում եկանք հետևյալ եզրակացության. Աբովյանի ստեղծագործությունները հարուստ են քննադական հայացքներով: Այդ հայացքները ուղղված են եղել ժամանակի բարքերին ու սովորություններին, դպրոցում տիրող անարդարություններին ու գրական լեզվին՝ գրաբարին:

Նորովի ուսումնասիրելով նրա « Վերք հայաստանին», եկանք հետևյալ եզրակացության՝ այս վեպով Աբովյանը լուծում է տվել այդ ժամանակաշրջանում գրական ասպարեզում տիրող թերևս ամենակարևոր երկու հարցերին՝ լեզվին և հերոսի ընտրությանը: Գրաբարը ճիշտ է գեղեցիկ լեզու էր, բայց դժբախտաբար մեռած ու անհասկանալի ժողովրդին: Ուստի աշխարհաբարը գրական լեզու դարձնելով, նա փրկում է հայ ժողովրդի գիրն ու գրականությունը՝ ընթերցողին ավելի հասկանալի դարձնելով այն: Իսկ վեպի գլխավոր հերոս ընտրելով Աղասուն, ով ծագումով գյուղացի և իրական կերպար էր, ժողովրդի մի մասնիկը, նա վեպն ավելի հասանելի ու հոգեհարազատ դարձրեց ժողովրդին:

Գրականության ցանկ

1. Աբովյան Խ.« Վերք Հայաստանի», Երևան 1981թ 376 էջ
2. Բազյան Սահակ «Աբովյանի բանաստեղծական աշխարհը» Երևան 1977թ., 488 էջ
3. Կարապետյան Հ.Ն «Խաչատուր Աբովյանի « Վերք Հայաստանի» վեպի պատմական ակունքները Հովի. Թումանյանի ուսումնասիրությամբ» Երևան 1982, 62 էջ:
4. Հակոբյան Պ.Հ «Խաչատուր Աբովյան» Երևան 1967թ « Կյանքը, գործը, ժամանակը» 761 էջ: